Թագաւորն երկնաւոր՝ Յիսուս Քրիստոս է
Որ անթառամ վարդէն մարմին առեալ է։

Եւ Առաքել[1] մեղաք լրցեալ աշխարհի,
Որ զպըլպուլն ընդ վարդին սակաւ գովեցի,
Ի Գաբրիէլ հրեշտակն օրինակեցի
Եւ ի կոյս Մարիամ ծընողն Յիսուսի։
Զձեզ աղաչեմ, ով ոք բանիս հանդիպի
Եղանակէ սիրով ձայնիւ բերկրալի,
Յիշեցէք զիս եւ ասէք. Աստուած ողորմի.
Եւ դուք արժան լինիք տեսոյն Յիսուսի։

Սէր Ցնորական.

Բարեբոյս տղայ մը որ Թագաւորական զինավարժութեան դպրոցը մնած էր, երկայն ժամանակ հաց, ապուր և ջուր ճաշակելէն զատ ուրիշ բան չէր ուզեր բերանը դնել։ Ցեսչին ականջը հասնելով այս բանս՝ համարեցաւ 'ի սկզբան թէ բարեպաշտութեան համար ըլլայ ըրածը. սակայն բարեսիրտ տըղան իր բռնած ճամբէն ետ չէր խոտորեր։ Պարոն Ցիւվերնէ տեղեկանալով տեսչէն այդ տղուն ըրածը, դիմացը կանչել տուաւ զտղան. և շատ յորդորեց զինքը որ ետ կենայ այդպիսի տարօրինակ սովորութենէ, ու սպառնացաւ ալ որ եթէ խօսք մտիկ չընէ՝ տուն կը խաւրէ զինքը։ « Ա՛հ, հառաչելով, խնայէ՛ թըշուառի մը, Տէր իմ, պատասխանեց » տղան, կէս մը լալով. կ'ուզես պատճառն իմանալ, ահա անկեղծութեամբ » կ'ըսեմ քեզի։ Հօրս տունը եղած ատենս քիչ մը սև հաց և պարզ ջրէ զատ ուրիշ խորտիկ մը չունէի. իսկ » հոս՝ փառք բարերարին, քաղցրաճաշակ ապուր, և առատ ճերմակ աղէկ » հաց ունիմ. և 'ի յիշատակ հայրենի » տանս աղքատիկ կերակրոյն՝ միս չեմ » ուտեր, որով կը նմանիմ հօրս ու մըրս »։ — Պ. Ցիւվերնէ և Ցեսուշն չէին կրնար արտասուքնին բռնել, տղուն այն աստիճան զգայուն և անյողդողդ կերպին վրայ զմայլած։ Պարոնիկ, ըսաւ այն ժամանակը Պ. Ցիւվերնէ, թէ հայրդ որ բանակին երկայն ատեն ծառայած է, ինչու ուրեմն հասոյթ չունի։ — Ցարի մը աշխատեցաւ քիչ մը ստակ ձեռք բերելու, բայց առ ձեռն ստակ չունենալով՝ չկրցաւ բողոքն առաջ տանիլ, որով լաւ սեպեց հրաժարիլ քան թէ պարտաւոր մնալ։ — Ուրեմն ես ալ կը խոստանամ քեզի որ քիչ օրէն հարիւր քսաննոց ոսկի կապել տամ իրեն. կը տեսնուի որ ծնողքդ աղքատ ըլլալնուն չեն կրցած զքեզ լաւագոյն կերպիւ հոգալ. ապրիս, շատ սիրեցի զքեզ, առ աս երեք ոսկին թագաւորին կողմանէ. ետքը հօրդ խոստացած թոշակն ալ կը խաւրեմ՝ վեց ամսականը մէկտեղ։ — Ի՞նչ միջոցով, Տէր իմ, պիտի տաս իրեն այդչափ ստակը։ — Դու անհանգիստ մի ըլլար, ես գիտեմ ընելիքս։ — Ա՛հ, Տէր իմ, եթէ այդ դիւրութիւնն ունիք, աւելցուցէք այս ինծի տուած երեք ոսկին ալ անոր վրայ. հոս ես իմ հարկաւորս ունիմ, հայրս ու մայրս աւելի կարօտ են քան թէ ես։

---

1 Բաղիշեցին է, որ ծաղկեցաւ 'ի կէս ԺԵ դարու։